Արդյունավետության ցուցանիշների համեմատական վերլուծություն

Ցորենի արտադրության արդյունավետության տարբեր ցուցանիշներ փոխկապակցված են և չեն կարող առանձին դիտարկվել:
Յուրաքանչյուր առանձին ցուցանիշ կարող է պատասխանել, արդյոք արտադրությունը (երկարաժամկետ թե կարճաժամկետ) տնտեսապես նպատակահարմա՞ր է:

! *Ընդ որում հնարավոր չէ, որ մեկ ցուցանիշը բնութագրի արտադրությունը որպես արդյունավետ, իսկ մեկ ուրիշը՝ ընդհակառակը:*

Արդյունավետության տարբեր ցուցանիշների փոխադարձ կապը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

	ՀԾՓԳ / Ձեռնարկատիրոջ շահույթ	Գործոնի հատուցում	Սահմանային գին
ադրյունավետ չէ	< 0	< (այլընտր.օգտ.) ծախքեր	< արտադրանքի գին
արդյունավետության սահման	= 0	= (այլընտր.օգտ.) ծախքեր	= արտադրանքի գին
արդյունավետ է	> 0	> (այլընտր.օգտ.) ծախքեր	> արտադրանքի գին

Օրինակում այդ փոխադարձ կապը կարելի է հեշտությամբ ստուգել: Հատկապես պարզ այն ներկայացված է Աղյուսակ 5-ում, որտեղ նշված են բոլոր ցուցանիշները զուգահեռ:

Եթե ընդունել, որ ապրանքի գինը հավասար է երկարաժամկետ ստորին սահմանին (եկամտաբերության սահման), ապա արդյունքում ստացվում է (մնացած հավասար պայմաններում) զրոյին հավասար ձեռնարկատիրոջ շահույթ (Հասույթ = Ծախքեր) և կապիտալի աշխատանքի և հողի հատուցման համար՝ սահմանային գներ:

Եթե ենթադրել, որ կապիտալի, աշխատանքի և հողի արժեքը ստացված հատուցման արժեքին հավասար են, ապա (մնացած հավասար պայմաններում) արդյունքում ստացվում է զրոյին հավասար ձեռնարկատիրոջ շահույթ (Հասույթ = Ծախքեր) և մնացած գործոնների հատուցման համար՝ ենթադրված գնային դրույքները, իսկ գնի ստորին սահմանը՝ ապրանքի արդիական գնին հավասար:

Այդ փոխկապակցվածությունը գործում է ինչպես երկար (ձեռնարկատիրոջ շահույթ, եկամտաբերության սահման), այնպես էլ կարճ ժամկետների համար (ՀԾՓԳ I, II, III, արտադրության սահման I, II, III):